Թ. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 20 ՈԵՊՏԵՄԲԵՐ — ԹԻՒ 847

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է։ Երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կրկնայ։

—o—

Վարձակայի համար ձեռք է 10 սանթիմ է

Բանակ եւ դրամ դրկել խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ„
Варна

Redaction du journa „Charjoum»
Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռք
15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռք
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք չեն յետ տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԼՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՓՃԱՐԷ

«ՏԱՍ ՏՊՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրոշիւրը յանձնված է տպագրութեան։

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս մրայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող գոկիմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր։

Դիմել «Շարժումի» Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս չքեղ քաֆէն կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժոզէֆ քարափին վրայ։ Կըստանայ զանազան հայերէն թերթեր։ Սա հասարակ բոլոր հայ կամարեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն։ Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիրքութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները։

ՌԱԶՄԻԿԸ ԽՕՍԵԼ Է ՍՊԱՌՆՈՒՄ

«Ռազմիկ»ի վերջին թիւում կարդում ենք մի յօդուածՊատահականութեանց առջեւ խմբագրական մարմնի կողմից անշուշտ, որովհետեւ սորագրութիւն չէ կրում։

Դամի յայտարարութիւն է։ որով վերջապէս խմբագրութիւնը իր տրամադրութիւններն է յայտնում հրապարակով անդրադառնալու այն քննադատութիւններին, ոլոնք վերջերս տեղում են Դաշնակցութեան, աւելի ճիշտը նրա սիրող շէֆերի և սիրող վարչական մարմնի գլխին։ Այդ յայտարարութիւնով խուտացվում է մի շարք յօդուածներով խօսել եղած քննադատութիւնների մասին, բնական է պաշտպանողական ուղղութեամբ։

Մխիթարականը այն է որ վախկոտ, արտաքուստ արհամարհանքի քօղի տակ ծածկված, մարտական նշան չունեցող «Ռազմիկը» ստիպվում է խօսել—լռելու անկարելութեան առջեւ ճվլված։ Վերոյիշեալ յօդուածի ոգուց երեւում է որ եկող յօդուածների շարքը լինելու են չքմեղացնող գրութիւններ, իրականութեան վրա փոշի ցանող ճառեր, և այս հաստատելու համար բերենք մի կտոր, այդ ծրագիր յայտարարութիւնից։

«Դաշնակցութիւնը հայութեան ուժը ներկայացուց։ ցեղային բարոյական քաղաքական ու քաղաքակրթական ուժ։ անոր համար զարմանալի չէ ամենեւին որ համակրութեան ու հակակութեանց յորձանքները անոր կերթան բաղխելու։ զարմանալի չէ որ գնահատութեանց ու քննադատութեանց առարկան կը դառնայ անիկա... նոյնիսկ քննադատութիւնները, նոյն իսկ հակառակորդ տարրերու ատելութիւնը՝ նոյնքան հասկնալի՝ որքան պարտուած թաթարներու զարոյթը կամ Ղաբեւի մը կազկանձիւնը՝ կուգան ամէնքը մէկանց միեւնոյն բանը ճշդելու և կրկնաբանելու։ հետեւաբար մենք կը կարծենք թէ որքան անխուսափելի պարտականութիւն կը ծանրանայ Դաշնակցութեան ուսին՝ միշտ աւելի բայձր հեղինակութեան և իր կոչման և նոյնիսկ ազգին վրա մնալու նոյքան բարոյական պարտք կը ծանրանայ ամեն քննադատի ու հակառակորդի, նաեւ հայ ժողովրդին վրայ՝ խղճահարութեամբ, իմաստութեամբ ու հեռատեսութեամբ վարուելու կազմակերպութեան մը նկատմամբ, որուն գոյութիւնը արհամարելը, որուն ուժերը չլատելը ապետաբեր միայն կրլլար հայութեան։

«Ու դժբախտաբար, հայ մամուլին մէկ մասը այսօր, այդ չարախինդ զոհացումը վայելելու պատրաստակամութեան մէջ կերեւայ»։

Այս յայտարարութիւնից անմիջապէս յետոյ գալիս է Անդրանիկի կոչի աւետումը, որ հայ զինուորներին պիտի ուղղուի։ Այս ամենը հաստատում են որ տրեվոգա, ալարմա կայ։ Վախը ընկել է Դաշնակցութեան մէջ։ Կեղծ արհամարհոտ լռութեան ժամանակները անցել են և հանդէս են բերվում Դաշնակցութեան ծառայութիւնները հայ ազգին—ժողովրդից, մամուլից հայցվում նրան չը խորտակել, որովհետեւ հայութիւնն է որ պիտի վտանգուի։

Նախ իրողութիւն է որոչ մի քն նպատակ ոչ մի հայ թերթ չէ ցանկացել Դաշնակցութեան կործանումը։ այլ մատնանշելով նրա թերութիւնները վարիչների անշնորքութիւնը և անպէտքութիւնը պահանջել է վերանորոգում, կտում, որովհետեւ այդ պարագային միայն Դաշնակցութիւնը կարող է շարունակել օգտակար լինել։ կամ խորտակում, որովհետեւ հին ձեւով մնալով նա այսուհետեւ միշտ վնասակար պէտք է լինի։ Փաստենք մեր ասածները։ ոչ ոք կարող է դրժել որ ռուս միապետութիւնը օգտակար է եղել Ռուսաստանի համար։ բայց հասել է մի շրջան որ նա այլեւս դարձել է վնասակար և նրան խորտակում են։ ու նրան պաշտպանել աղերսելով թէ խնայեցէք որովհետեւ նա լայնացրել է Ռուսաստանը, ռուսի դիրքը բարձրացրել աշխարհում, ուսումնարաններ է բացել ուր տեղ ուսել են Տոլստոյներ և այլ հանճարներ։ ծիծաղելի կը լինէր չէ՞։ Ռուսները ռոմանովներին չէին ուզում գահազրկել միայն սահմանադրութիւն են պահանջում, վարչական ձեւը փոխել են ուզում։ հակառակ նրան որ Ռոմանովներն են Ռուսիան հասցրել այս վիճակին։ Բայց եթէ Ռոմանովները չը զիջեն, բնական է որ վաղը ռուսները պէտք է ասեն՝ կորէք, մենք սահմանադրական միապետութիւն իսկ չենք ուզում։

Վերցնենք մեր կեանքից։ Հնչակեանութիւնը մինչեւ 96ի ընկիրքնելը իր փառքի գագաթնակէտին էր հասել։ Տաճկաստանում նա թագաւորում էր յաղթականօրէն։ Սասուն, Զէյթուն, Պոլիս ապստամբական վայրեր էին իր գործերով նա ներկայացնում էր հայութեան բոլոր ուժերը և աւելի կարծես փայլուն կերպով, որովհետեւ նա ձեռք էր բերել Մայիսեան Մրտգիրը։ Զէյթունին եղած զիջումները։ Հայութեան մեծ, շատ մեծ մասը հաւատացած էր որ այլեւս հայկ։ խնդիրը լուծվում է։ Կովկասի, Տաճկաստանի հայութիւնը ակնածում և սարսում էր հնչակեաններից։ արտասահմանում դաշնակցութեան հոտ իսկ չկար։ Բուլգարիա, Եգիպտոս, Ամերիկա հնչակեանները թագաւորում էին և եթէ ոեւէ դաշնակցական այս երկիրները մտներ խեղճը պարտաւորված էր հնչակեան կամ չէզոք ձեւանալ։ Եւ Հնչակեանութիւնը այդ փայլուն վիճակի մէջ էր, որ սկսվեց քննադատական ուղղութիւնը դէպի այդ հայութեան բարոյական յեղափոխական ուժը ներկայացնող կուսակցութիւնը։ Նոյն արհամարոտ դիրքը բռնեցին և հընչակեան վարիչները գոռոզացած իրենց մատուցած ծառայութիւններով, ինչ որ երեկ դաշնակցականները, երեկ եմ ասում, որովհետեւ այսօր տեսնում եմ որ Դաշնակցութեան մէջ կարծես ստւարանում է վերանորոգման ցանկացողների թիւը։ Եւ դա կորստաբեր եղաւ Հնչակեանութեան համար։ Նրա վարիչները փոխանակ կազմակերպութիւնը

անմիջապէս չտկելու պնաց-ին հին ընթացքով՝ անցեալ փառաւոր գործունէութիւնը չը փրկեց կազմակերպութիւնը, նա բաժան բաժան եղաւ. գրեթէ տապալվեց, որովհետեւ հայ յեղափոխութիւնը այլ պահանջներ դրրեց նրա առջեւ, ու նա չը կարողացաւ գոհացում տալ այդ պահանջներին. եթէ այնքան փառաւոր անցեալ ունեցող մի կուսակցութիւնը թուլացաւ, ընկաւ, Դաշնակցութեան համար այդ անսպասելի չէ. Պէտք է ընդունել որ տաճկահայ յեղափոխական դրրծի մէջ հնչակեանութիւնը աւելի փայլուն անցեալ ունի. Պատմութիւնը նրան է յատկացնելու Զէյթունի, Սասունի, Պոլսոյ առաջին շարժումները, մայիսեան ծրագիրը. դաշնակցականները հնչակեանութեան աշակերտները են. Պոլիսը, Սասունը, Զէյթունը երբ դղրդումէր և հայութեան ապստամբ դրօշն էին ծածանեցնում թուրք կայսրութեան ամեն ծայրում. հնչակեան բանտարկեալները երբ թրքական դատարանները դղրդացնում էին իրենց արահամարոտ խիստ դատափեռիչ ըմբոստութեամբ, դաշնակցական ներկայ վարիչները և հերոսները դամստրկական օրօր էին լսում, կամ մկան պէս պատերի ծակերն էին մտնում. այնու ամենայնիւ այդ կուսակցութիւնը թուլացաւ և տեղի տուեց իր աշակերտ դաշնակցականներին. Ուրեմն անկումը բնական հետեւանք հնչակեանութեան մէջ ոտեղծված ոչ մաքուր մթնոլորտի, կարող է ունենալ և Դաշնակցութիւնը, եթէ նա չը շտկվի, եթէ նա չազատվի իր ներկայ վարիչներից. եւ այդ դրութիւնից հիմա հնչակեանն է օգտվելու. ինչպէս դաշնակցութիւնը օգտվեց նրա անկումի ժամանակին. որովհետեւ ներկայ հնչակեանութիւնը օգտվել է իր դառն փորձերից ու ինքնամփոփ վիճակ ընդունելով աշխատում է զօրանալ.

Այն քաղաքական մարմինը որ չէ ուզում շտկվել, զտվել և ժամանակի պահանջներին գոհացում տալ, նա պէտք է կործանվի հակառակ իր բոլոր անցեալ խոշոր ծառայութիւններին, և որ չափ շուտ այնքան լաւ։ Ազերսով. ժողովրդին ոուտ վախեր մատնանշելով բան չի դառնայ. Դաշնակցութիւնը պէտք է շակրվի, բայց հակառակ պսրագային ես ամենայնիւ կուսակից և գործոն կուսակից եմ նրան քանդողներին.

ՎԱՐՈ



ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՎԱՐԻՉՆԵՐԸ (*)

Այնքան մեծ դղրդիւնով աւեւված սահմանադիր ժողովը ահագին պատրաստութիւններից, աշխատութիւններից, ճառախօսութիւններից և յոխորտական սպառնալիքներից յետոյ այն հեռեւանքներն ունեցաւ, որ քուէարկեց միայն մի քանի բանաձեւեր, որոնք չը պէտք է իրականանան կեանքի մէջ, մեռան թուղթի վրա որ չը պատրաստեց ոչ մի ծրագիր, չը կարողացաւ քննել նոյն իսկ արդէն պատրաստուած դպրոցական ծրագիրը, որպէսզի այս սեպտեմբերից մենք ունենայինք գոնէ դպրոցական ծրագիրները. վերջացրեց իր անփառունակ գոյութիւնը նրանով, որ «յեղափոխական ակտ» կատարելու կոչուածները, պատնէշներ տապալողները, սուլթանների դէմ կռիւ սպառնացողները, հլու և անմռունչ կերպով հնազանդվեցին մի պրիստաւի հրամանին և չը կարողացան նոյն իսկ հրաժարվել տալ «յեղափոխականի համար այնպիսի անպատուաբեր և անարժան ստորագրութիւն որպիսին տպված է «Զանգոի մէջ».

Այո այդպէս է լինում միշտ կեղծ—ապստամբների, կեղծ յեղափոխականների և կեղծ սոցիալիստների վախճանը. Հսկայ ձեւանալով խօսքով, ֆրազներով, բայց վախկոտ մուկն—կեանքի մէջ.

Էջմիածնի համագումարը շատ բան պարզեց, շատ մութ կէտեր լուսաբանեց. Նա բացեց հայ ժողովրդի աչքը. նա սթափեցրեց նրան. որովհետեւ նա մերկացրեց այդ ժողովրդի առաջ Դաշնակցութեան այժմեան ղեկավարների իսկական ֆիզիօնոմեան և ցոյց տուեց, որ հասել է ժամանակը, երբ ժողովուրդը պէտք է մտածէ սազտվել այդ կուսակցութեան ճիրաններից, բռնապետական խայտառակ լծից և ինքն իր ձեռքն տանէ իր ազգային և հասարակական շահերի պաշտպանութիւնը.

Իրանց յախուռն, չը մտածված ընթացքով դաշնակցականները շատ բան փչացրին. Ազգային եկեղեցական համագումարի գաղափարը վաղուց արծարծված և կենսական պահանջ դարձած մի գաղափար էր, այժմ մինոր համաժողովի գումարումը բաւական դժուարացաւ և մենք դարձեալ երկար ժամանակ պէտք է գտնվենք քաոսական դրութեան մէջ. մեր եկեղեցական, դպրոցական, կալուածական, ընտրական և կուլտուրական գործերը երկար ժամանակ պէտք է մնան անկերպարան, անղեկավար և խառնաշփոթ.

Ամբողջ պատասխանատուութիւնը հայ ազգի, եկեղեցու և պատմութեան առաջ ծանրանում է Դաշնակցութեան վրա, որ իր յոխորտանքն ընթացքով. կրկնում ենք, վտանգեց ամբողջ մի մեծ գործ և ազգային դատ։

Հ. Առաքելեան

«Մշ.» թիւ 190

Զինուորական Դատարանի մէջ

Ես, անդամ յեղափոխական կուսակցութեան, իսկ այժմ տնդամ նրա ռազմիկ բաժանմունքի Սպանեցի Մինին.

Շատ չեմ ուզում խօսել այդ անելոց ինձ ստիպող պատճառների մասին այլ միայն կը յիշեցնեմ Մոսկվայի դեկտեմբերեան օրերը, երբ Մինը եւ Ռիման, կարծես թշնամու երկրում գտնվելով, կատաղած սպանեցին մի քանի հայրեր մարդ։

Ես աւել չեմ ուզում խօսել դրա մասին, որովհետեւ բաւական խօսվեց եւ գրվեց։

Ի՞նչի է կոտորվում Մոսկվայի խեղճ ժողովուրդը, հարցնում էր մարդ։ Որովհետեւ տգիտութիւնից եւ թշուառութիւնից տանջված եւ Նիկոլայ Բ.ի հրապուրիչ մանիֆեստից եւ կառավարութեան խորամանկ քաղաքականութիւնից խաբված ժողովուրդը ապստամբութեան դրօշ էր բարձրացրել զինքը յաւիտենապէս տանջող չարչարիչների եւ նեղիչների դէմ.

Ես սպանեցի Մինին, որովհետեւ նա սպանել էր ազատութեան մարտիկներին եւ Մոսկվայի փողոցը արիւնով թրջող անմեղ մարդկանց։

Հազար միլոցին Մինը կրթում էր զինուորներին աշխատելով նրանց դարձնել ոճրագործ, կառավարութեան հնազանդ ստրուկներ եւ քաջ հայրասպաններ ու եղբայրասպաններ. Ես սպանեցի Մինին. որովհետեւ նա ինչպէս Սիմեոնովեան գնդի պետ գիւղացի զինուորներին կրթում էր ազատական շարժման դէմ գործնական թշնամական ոգով։

Նիկոլայ Բ.ը Իվան Սուսանինի նը ման զինքը չրջապատեր է արիւնարբու պսլստական Տրեպովներով. Միներով կոտորածներ ստեղծողներով որոնց ձեռքերի վրա դեռ երեւում է ժողովրդային արիւն։

Ես միայն մի բան եմ յիշեցնում Բոմանիանովներին, այն որ ինչպէս մէկ մէկ ընկնում են գահի պաշտպանները, այնպէս էլ վերջապէս պէտք է ընկնի գահը։

Իմ հարցաքննութիւնների միջոցին ինձ հարց տրվեց թէ ով մեզ իրաւունք տուեց սպանելու, որին ես իբր յեղափոխական կուսակցութեան անդամ, կը պատասխանեմ այսպէս, ինչպէս ընկերներս իմ առջեւ պատասխանեցին մեր կառավարութիւնը որոշեց ճերմակ տեռորին պատասխանել կարմիր տեռորով։ Իշխանութիւնը մեզ ստիպեց դիմել այդ տեռորին։

Ինչպէս ժողովրդի զաւակ (ես փայլուն ծնողներից չեմ ծնված, հայրս զինուոր է, իսկ մայրս գեղջկուհի) ես ձեզ հարցնում եմ այդ ժողովրդի լեզուով. ո՞վ ձեզ իրաւունք տուեց որ մեզ հարիւրաւոր տարիներով տգիտութեան եւ թշուառութեան մէջ պահէք. բանտերում գոռէք Սիբիր աքսորէք, դատապարտէք մեզ մշտական բռնի աշխատութեան, կախէք, հրացանի բռնէք եւ հարիւրներով կոտորէք։ Դուք բռնութեամբ էք տիրացել այդ իրաւունքներին եւ օրէնքներ ստեղծել այդ իրաւունքները վաւերացնելու. իսկ քահանաները ձեր այդ իրաւունքները սրբացրել են Բայց հիմա մի նոր իրաւունք է առաջ եկել. ժողովրդային, որը անկասկած ձեր տմարդի իրաւունքից աւելի արդարամիտ է։ Այդ ապագայի իրաւունքն է որին դուք մահու եւ կենաց պատերազմ էք յայտարարել որովհետեւ չատ լաւ գիտէք թէ ձեր տմարդի իրաւունքները աներեւոյթանալուն պէտք է անհետանաք և դուք։

Իսկ մենք ժողովրդային ազատութեան մարտիկներս ելած բուն ժողովրդից, մեր մէջ բաւական ուժ եւ իրաւունք ենք գտնում զէն ի ձեռին կռուելու ձեզ ինքնակալութեան եւ բիւրոկրատիաին կամայականութիւնների ներկայացուցիչներիդ դէմ, տիրանալու մեր ժողովրդային նոր իրաւունքին։

Ես մի քանի իսքով կը չոչափեմ իմ կենսագրութիւնը։ Ուսուցչական դպրոցը վերջացնելուց յետոյ ինձ վարժուհի նշանակեցին Լիֆլանդիոյ մի խուլ անկիւն Էստէնի կառավարական դպրոցում։ Ռուս կառավարութիւնը այդ միջոցներին ճգնում էր, ինչպէս եւ այժմ ռուսացնել արեւելեան ծովային նաւահանգիստները, եւ այդ նպատակով բանում էր պետական դպրոցներ եւ ռուս ուսուցիչներ ու վարժուհիներ ուղարկում որպէսզի դասատուութիւնը ռուսերէն տարուէր։

Այդ երկիրը ուր ես վարժուհութիւն արի, շատ փիչ հրապուրիչ է, որովհետեւ երեք կողմերից չրջապատուած է անտառներով, իսկ չորրորդ կողմով Վայինեան լճով։ Տըխուր պատկեր էին ներկայացնում մշտական ծառերը եւ աւելի սարսափելի էր թշուառութիւնը որի մէջ թաղուած էր բնակչութիւնը, որը մի կտոր հող անգամ չունէր։ Ամեն ինչ գտնվում էր բարոնների եւ կառավարութեան ձեռքում իսկ բնակչութիւնը կերակրվում է ձկնորսութեամբ։

(Շարունակելի)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ

(Այս յօդուածը հրատարակած է արտասահմանցիներուն յայտնի տօք. Լորիս Մէլիքովը ռուս «Սթրանա» թերթում, որի խմբագրութեան մէջ և կարեւոր պաշտօն ունի մեր յարգելի հայրենակիցը)։

Խոովեցուցիչ անցքեր տեղի կունենան պալքանեան թերակղզիին վրա։ Յոյներու եւ պուլկարներու միջեւ եղած ատելութիւնը պայթեցաւ Անխիալոի պօգրոմին մէջ։ Այդ առթիւ Պուլկարիոյ, Թուրքիոյ

եւ Յունաստանի միջեւ տեղի ունեցած բանակցութիւնները դիւանագիտական յարաբերութիւններու խզում կսպառնան

Սուլթանի առողջական վիճակի մասին յուսահատական լուրը. թէեւ հերքուած պաշտօնապէս բայց անկասկած է որ այդ հիւանդութեան պատճառով անոր օրերը հաշուած են։ Եւրոպական մամուլը լրջօրէն կդրադի գահաժառանգութեան խնդրով։ Մեւնոյն ատեն թերթերը կը գրեն և սահմանադրութեան մասին զոր Սուլթանը չնչեց առանձին փէրմանով մը։

Այս իրողութիւնները կրնան արեւելքում խոշոր անցքեր առաջ բերել։ կարելի է թէ վերջնական լուծումը արեւելեան խնդրին, փորձաքարը եւրոպական դիւանագիտութեան, որը վախճոտ անվճռողականութեամբ մէկ կողմ կը քշէր այդ ամենուն համար հրատապ խնդիրը ընդհանուր եւրոպական ընդհարման պատճառ չստեղծելու համար Հանգամանքներու հոսանքը այժմ եւրոպական դիւանագիտութիւնը ակամայից դրած է ճակատագրական անցքերու հանդէպ։ Այդ թշուառ արեւելեան խնդիրը որչափ արիւն զոհ եւ տանջանք առած է, որուն մէջ եւրոպական դիւանագիտութիւնը ցոյց տուաւ իր լիակատար անանկութիւնը։

Դիւանագիտութիւնը ամբողջ ժամանակի մէջ անտարբեր հանդիսատես մնաց, առանց ուշադրութիւն դարձնելու Թուրքիոյ քրիստոնեաներուն արուած միջազգային հանդիսաւոր խոստումներուն վրայ։

Ան չուզեց ըմբռնել անոնց արդարացի պահանջները։ Եւրոպականը կատարեց այդ մարդկային պարտականութիւնը չնորհիւ ստորին էական շահերու եւ փոխադարձ հակառակութեան։

Սուլթան Համիտի ճարպիկ եւ նուրբ դիւանագիտութիւնը ստեղծեց Եւրոպիոյ Թուրքիոյ գործերուն բացարձակօրէն չը խառնուիլը։

Բոլ Դամպոն հայկական մեծ կոտորածներէն վերջը, Սուլթանի այն ատենուան տիրելիին Իզէտ պէյին ըսեր է «ձեր տէրը հրաշք գործեց—անիկայառաջ բերաւ բոլոր պետութեանց համաձայնութիւնը»։ Այդ հրաշքը Ռուս-Թրքական պատերազմէն կը շարունակուէր մինչեւ այդ օրը։ Համաշխարհային պատմութեան մէջ չը տեսնուած անգութ հայածանքներու պատճառը անկասկած Սուլթան Համիտն է։ Այս իրողութիւնը լոկ խօսք չէ։ այլ գոկիմաններու վրայ հիմնուած (Դեղին Գիրքը Հայկական գործեր, 1897ի թիւ 245. Մակեդոնական գործեր. 1903ի թիւ 68)։

Սուլթանի թագաւորութիւնը կը գատուի Եւրոպիոյ 30 տարուան պատմութենէն եւ մարդկային պատմութեան մէջ կը թողու արիւնալի հետքեր։ Սուլթանի այդ հրէշային քաղաքականութիւնը շատ պարզ նպատակ ունէր։

Եւրոպիոյ միջամտութենէն խուսափելու համար՝ ան աշխատեցաւ Թուրքիոյ քրիստոնեաները կանոնաւորապէս ջնջել եւ այդ պարզ ձեւով Պէրլինեան դաշնագրութեան 23 ե. 61րդ յօդուածը Մտադրած քաղաքականութիւնը իրականացնելու համար Սուլթանը ճարպիկօրէն չոյեց Եւրոպացիները նիւթական հրապոյրներով օգտուելով անոնց հակառակութենէն։

Այդ հրապոյրները կը կայանային գանազան արդիւնաբերական գործարանների արտօնումը իր պետութեան մէջ։ «Պախշիշի» քաղաքականութիւնը սկսաւ գերակշռել պաւոյ եւ շահի քաղաքականութեան։

Եւրոպան մինչ այդ քաղաքական անկման հսանիլը քանի մը անգամ իր յարաբերութիւնները փոխեց Թուրքիայի հետ։ Երբ Թուրքիոյ թուլութիւնը Ռուսիոյ կարելիութիւն կուտար իր աւանդական երազները իրագործել, Եւրոպան Թուրքիոյ ամբողջութիւնը եւ անկախութիւնը կը պահանջէր։ Համեմատաբար մօտերս Եւրոպական պետութիւնները եզրակացուցին թէ Թուրքիոյ լիակատար ամբողջութիւնը պահանջելու համար պէտք է զոհել անոր անկախութիւնը եւ զայն բաբեռոզել իր քօնթրոլիօրներու եւ միջամտութեան օգնութեամբ։

Միայն Ռուսիան էր որ կը շարունակէր իր տիրապետողական քաղաքականութիւնը որ կտակուած էր Պետրոս Մեծէն եւ Քաթերինէն։

Ու երբ վերջին պատերազմի ատեն ռուսը կը գտնուէր Պոլսոյ դուռնեռուն առջեւ եւ Թուրքիոյ դոյութիւնը մազէ կախուած էր Եւրոպան պաշտպանեց Թուրքիոյ անկախութիւնը եւ Պէրլինի համաժողովի մէջ որոշեց պահել իւերու կացութիւնը։

Այդպիսով ռուս դիւանագիտութեան հաշիւները չարդարացան։

(Շարունակելի)

ՍԻՐՈՂ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ
Եւ
ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅԱԿԸ

Դ.

— Պարոն, Սիրող, դուն կըսէիր թէ մենք կարեւորութիւն չենք տար քննադատութիւններուն, ձեր Զանգը թիֆլիզի մէջ ելած է իր օլիմպիական բարձրութենէն կը պատասխանէ բողոքող պատգամաւորներուն եւ ուրիշներու «Ռազմիկն» ալ յայտարարութիւն (ծրագիր մը հրատարակած է որ պիտի պատասխանէ քննադատութիւններուն. այս ինչպէս եղաւ՝ աղբար. «Մուրճ»ի Լեւոն Մարդիսեանին ալ միշտ պարտաւորուած էք պատասխանել...

— Է՛հ, եղբայր, դրանք բոլորը եւէկ կարեւոր դաշնակցականներ էին.. ի՞նչպէս չը պատասխանենք. անկարելի է. Զանգը սկսեց, Ռազմիկն ալ Հայրենիքն ալ պէտք է սկսի։

— Բայց ձեր Ռազմիկին Ժիրայրը, բաներ մը գրեց. ամենուն ալ գանազան մակդիրներ տուաւ։

— Թողէք ասուած սիրէք, այդ մզդսին.. Նրա գրածներին ինչի՞ էք կարեւորութիւն տալիս։

— Բայց ան խմբագրական մարմնի անդամ է. Զարդարեանի գրուածներն իսկ անոր գրչի տակէն կանցնին.. բայց ասուած սիրէք այդ Ժիրայրը ո՞ւր մթերեց այդ մտաւոր պաշարը որ թերթի մը վարիչ մարմնի անդամ կը ներկայանայ ու եկած յօդուածները գրաքննութեան կենթայէր։

Շատ կարեւոր ուսուցիչներից և կարեւոր դպրոցներու ու միջակոյրերու մէջ օրինակ Վահան Մազմանեան հիւսնական խանութում, եղբայր Պետրոսի սրճարանում, մանած ներկելու ֆաբրիկայում. վարժապետներն են Ֆէտօ Անտօն -գրաշար Վահան Մազմանեան հիւսն և Պիսնեանի համալսարանին 14 տարեկան երեխաները։

— Բայց պարոն այդպիսի պաշարով ի՞նչպէս կրնայ թերթի մը մտաւորական մասին վրա հսկել։

— Ահ. ի՞նչ հսկելու խնդիր կայ որ բաւական է որ տեսաւ յօդուած մը ուր Դաշնակցութեան համար գովասանք չը կայ. կամ թէ ջարդեցինք, փշրեցինք յաղթեցինք, ուխտաւոր եւ ուխտաւորներու կարաւան չը կայ. կարգիլէ։

— Ուրեմն աշխարհիս չորս կողմին դաշնակցականներն ալ այն համոզումն ունին թէ Ֆիլիպէի «Սախիրին մէջ էջ մը ունին». խնդրեմ, այս առակ է. անխուսելի է. չը վիրաւորուիք. մանաւանդ առակներով խօսել գուք շատ կը սիրէք. ձեր սրամիտ ընկերներէն մին հաղորդեց որ ձեր Ամերիկայի ճառախօսներէն մին, շարունակ առակներով կը խօսի լսարաններու մէջ։

— Ոչ, ոչ չեմ վիրաւորուիր. Առակը ի՛սկզբէ անխուսելի է։

Հարց մնալ պարոն սիրող.

«Ռազմիկի» խմբագրութիւնը ինչու նախ քան պատասխանելը եղած քննադատութիւններու այդ ծրագիր յայտարարութիւնը մէջտեղ հանեց։

— Վահ, չե՞ս հասկանում, որովհետեւ յօդուածները այնպէս պէտք է գրուին որ խմբագրական ամբողջ մարմինը համաձայնի. Իսկ մարմնի անդամների մէջ իհարկէ անհամաձայնութիւններ կան. ուրեմն պէտք է դեռ յօդուածները լաւ ծեծել ապա հրատարակել. իսկ այդ կարող է ուշանալ. բայց չէ որ էլ երկար լռել չէր կարելի։

— Բայց հարց մնալ. Ռուբէն Զարդարեան Պոլս յ յայտնի գրագէտներէն է. էհ որոշ տեսակի մարդոց համար ալ աղուոր կը գրէ—ինչպէս համաձայնած է Ժիրայրի մը հրսկողութեան տակ թերթ վարել։

— Այդ տեսակ հարցերի մէջ մի մտնէք. Այդ Զարդարեանի անձնական գործն է . . . որի հսկողութեամբ ուզենայ կը գրէ։

— Բայց պարոն, գրագիտական արժանապատուութեան խնդիր կայ հոս։

— Արժանապատուութիւնը միթէ՞ բազարում ծախում են։

Նա ինքնաստեղծ է. թերեւս ամեն մարդ էլ ունի. ինչպէս իհարկէ եւ Զարդարեանը. բայց այս խառնիխուն ժամանակներում ո՞վ է այդպիսի էտիքական նուրբ խնդիրների մէջ մտնողը.

— Կրկին հարց մը.

— Բայց շատ երկար եղան այդ հարցերը.

— Վնաս չունի. արդէն դուն բան գործ չունես. արեւստդ միայն խօսիլն է ինձ հետ խօսած, ուրիշ տեղ խօսած միեւնոյնը չէ՞

— Պուլկարիա նոր ճառախօս մը ելեր է. Եգիպտոս ալ մէկը գտնուի Ատոնք երկուսն ալ Հնչակեանները կոտորելու լմնցնելու կուսակիցներ եղած են Ղարսի մէջ.... ինչպէս կըլլայ որ Հնչակեաններու հետ միութեան, հասերաշխութեան ցանկութիւններ կը յայտնեն, կը ճառեն!

— Ահ, շատ ախմախ ես եղել. շատ պարզ է. հիմա եղբայրասպանութեան դէմ շատ մեծ բողոքներ կան, Արեւելեան բ/ւրօն իսկ զիջեց յայտարարել. խառն դատարաններ կազմեց. եւ յետոյ այս արտաքսմանում ժողովուրդը աւելի համերաշխութեան բաղձացող է. մենք էլ փող չունենք. թող պէտք է փչել ժողովրդի աչքին, փող. փող առնելու համար. վաղը եթէ վտանգը անցնի նորից մեր հին զուռնան կը փչենք... կարելի է վաղը Վոամեանն էլ համերաշխութիւն բռռայ։

— Հա, լաւ ըսիր. կսեն թէ Ամերիկայի մէջ այժմ դաշնակցականները երկու բարթիի բաժնվեր են նոր եէ հին. ճի՞շտ է...

ԱՍԵՂ

ՀԱՆԴԻՊՈՒՍ

Աշնանային թղպոտ երեկոյ մըն էր կանցնէի Վառնայի աղքատիկ թաղերէն միոյն մէջէն։ Փայտեայ կիսախարխուլ հիւղի մը մէջ, մանղալի մը աղքատիկ կրակին վրայ ձեռքերը տարածած նստած էր հայ համալ մը. հացի քարթու պատառ մը նալ դրած մանղալի եզրին վրայ կը տաքցնէր... Մօտեցայ հայաստանցուն ու հարցուցի աղբար, ի՞նչ կրնես...

— Ձես տեսնար, ձեռքերս կը տաքցնեմ եւ կը պատրաստուիմ հաց ուտելու. երեկոյեան ճաշս։

— Երկրէն վաղուց հոս եկած ե՞ս.

— Զէ, երեք չորս ամիս կայ...

— Որ գաւառէն ե՞ս։

— Մոկաց աշխարհէն։

— Դեռ լաւ գործ մը չը գտա՞ր։

— Զէ։

— Երկիրը ինչպէ՞ս է։

— Մի հարցուր, երկրի մէջ ամէն բան լմնցաւ, ոչ հող կայ, ոչ տուն կայ, ոչ անասուն եւ ոչ տունի ապրանք, ոչ յոյս։ Անգրանիկն էր յոյսերնիս, ան ալ գնաց. երկրին մէջ չը մնաց։

— Բայց ան նորէն երկիր պիտի դառնայ։

— Հա, բայց մինչեւ օրս գնացողը ալ ետ չը դարձաւ...

Ոչ Անդրանիկը կը վերադառնայ. ուրիշներն ալ կուգան.. Մնաս բարով։

— Կեցիր էֆէնտի, քեզի բան մը պիտի ասեմ։ Այստեղ նոր մարդ մը եկեր է. կը ճանչնաս անշուշտ. Ֆրանկաստանէն եկեր է կըսեն. երգեր կը գրէ։ Ցեղափոխ. թերթերուն մէջ, սպգին ցաւեր կուլայ, բայց փարայով...

— Ի՞նչ տեսակ մարդ է.

— Ֆէնկի պէս մարդ մը. աս թաղերու մէջ շատ կը պտրտի. ինք հոս չի կենար... այս թաղը աղտոտ թաղ է. ֆապրիկաէ աշխատող աղջիկներուն մեծ մասը հոս կը բնակի, ինքզինքին կը ծախեն... ալ... ադ ֆըրէնկ, հայուն ցաւերը լացող հայը հոս տեղեր ի՞նչ գործ ունի...

— Ան «ուխտաւորներուն» կարաւանին կը պատկանի. պատասխանեցի ես, իր մասնագիտութիւնն է, եւ հիմա ալ հոս չէ. յարմար քաղաք մը գնաց։

— Ի՞նչ պիտի ընէ հոն,

— «Նոր ուխտաւորներու» կարաւանին անդամներու թիւը պիտի աւելցնէ, պզտիկ տղաքներէն եւ աղջիկներէն։

— Ուրեմն ալ հոս չէ ադ մարդը։

— Ոչ։

— Ուֆ. կուզէի աս տունէն ելլալ. կը վախնայի թէ օր մը փորձանքի հանդիպէի, մօրուքն բռնէի գլուխը պա երուն զարնէի... ան ալ յեղափոխական է եղեր... ան երկիր

երթայ. Երկիրը պիտի աղաղակի:

—Ոչ, մի վախնար. ըսի որ աղմարգը նոր ուխտաւորներու կարաւանին անդամ է գրուած անոնք երկիր չեն երթար, իրենց յարմար տեղերը գիտեն, հոն կերթան...

—Անոր կացած քաղաքը մեզմէ հեռո՞ւ է.

—Ոչ շատ: Նոր ուխտեաներուն կարաւանին կրդրոնավայրն է.

—Իր պէս չատեր կա՞ն հոն.

—Այո... կարելի է անկէ ալ վար. չե՞ս գիտեր հայուն առածը. «պտուկը գլոորեցաւ իր կափարիչը գտաւ.

—Էֆէնտի գիտես ի՞նչ կայ. կը տեսնա՞ս իմ վիճակս հոս, ասկէ վար աղքատութիւն չի ըլլար. երկիրն ալ այսպէս էր տունով տեղով. բայց սիրտս այնչափ չէր այրէր. հոս ալ չէր այրեր, բայց երբ տեսայ այդ Ֆրանկստանէն եկած մարդը. որ մեր ցաւերուն համար երգ կը գրէր, բայց սրիկային մէկն էր, սիրտս մարեցաւ. ըսի մեր ցաւերուն վերջ չը-կայ, քանի զայն լացողները այդ սրիկաներն են: Հիմա ուրախ եմ, որ ըսիր թէ ատանկները երկիր չեն երթար. չը լային ալ աւելի աղէկ պիտի ըլլար, բայց ինչ ընես. կուզէի կազէթայի մէջ գրել տալ անունն ալ. հիմակ ալ կուզեմ.

—Ոչ մի գրել տար, ես գրել կուտամ, թէ ինքը կը հասկնայ եւ թէ իր գացած քաղաքին մարդիկը.. այդ ալ բաւ է իրեն.

Աստուած սիրես գրէ, կըսեն թէ կազէթաները մարդիկը ուղղելու համար են. այդ Փ... ուղղելու է կը ցաւիմ որ գրել չեմ գիտեր... ինչքան բաներ կան գրելու...

—Բարի գիշեր Ամի.

—Բարի գիշեր տղաս. չը մոռնաս գրել տալ.

Հիւլէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊՈՒՓՐԷՇ 16 Սեպտ. 1906

Անցեալներս «Մոկոլոյս»ի մէջ դաշտային հանդէս մը տեղի ունեցաւ տեղւոյս Դրօշակեաններու կողմանէ ի նպաստ ընթերցարանի քոյին տակ.

Շատ դաշտային հանդէսներ տեսած էինք բայց այսչափ խաղքութիւն քնաւ.

Սոյն հանդէսին բանախօսելու, և տոթիթէն օգտուելով Վարդօն վարկաբեկելու համար, Պուլկարիայէն մի քանի «զէվզէկ»ներ բերել տուած էին—կարծես թէ հոս քիչեր ըլլային—սոնցմէ մին՝ ելաւ Կովկասի Հայ—Թաթարական կռիւները, ու դաշնակցական զինուորների քաջութիւնը նկարագրեց, ափեղ ցփեղ այլանդակութիւններով. իսկ ուրիշ մը—վարժապետ—ըսաւ թէ. «ես յեղափոխութեան վրայ չի պիտի խօսիմ, դպրոց և ընթերցարան արդէն ինքնին յեղափոխութիւն է. եթէ դպրոցի և ընթերցարանի ուժ չի տանք, մեզ համար յեղափոխութիւն չիկայ» ևայլն. կարծես թէ՝ Հայ ազգը 25—30 տարի առաջ դպրոց և ընթերցարան չունէր որ չէր զարմանալի՞ պ. պականաս. իսկ անդին, Ռուս ճուքցի ակնոցաւոր թեմնսալի կին մէկը՝—տեղւոյս լաբէնե ուն առաջին շէֆը—գինով վիճակի մէջ ելաւ բաներ մը մռլտաց. ուսկից մի քիչ շուարած մնալէն յետոյ, քսանեհինգ անգամ դրպրոց պոռաց, այնչափ ալ ընթերցարան ուռնաց, լմնցաւ գնաց. ասոր վրայ աւելցուցէք երկեցիկ խումբ կոչածնուն աններդաշնակ զոռոցը. առաջնորդութեամբ երաժշտապետ՝.՝.՝. պ. Թորգոմի. շիտակը ըսելով ասիկա դաշտային հանդէս չէր. ա՛յլ բառին բուն նշանակութեամբը խաղքութիւն էր. և այս խաղքութեան մէջ ա՛լ դաշտային խաղեր կոչածնին իր կարեւոր բաժին ունէր. «պիր աիր գիլ»—եէսիր ալմա՞ճա—Ալտրամբճ—ուզուն էշէկ» և այլն, ու ասոնք տեղացի հայերու և օտարներու ներկայութեամբ կը ներկայացուէին, իբր հայ ռամկական խաղեր, երեւակայեցէք անգամ մը, այս մարդիկը մեր վրայ ի՞նչ գաղափար կազմեցին, մենք չիտակը ըսելով ամչցանք. և ձեզի ալ կըսենք պ. փիլոֆֆիներ. ա. մո՞թ է ամո՞թ մի քիչ խիպ ունեցէք, օտարին ներկայութեամբը ազգին արժանապատուութիւնը մի վիրաւորէք, և ձեր տգիտութեան ու եսութեան մի զոհէք.

Իսկ եթէ ձեր դաշտային հանդէս կոչածնիդ փիլաֆ, ձուկ, ձմերուկ ուտելու մէջ կը կայանար, աւելի լաւ էր որ ատիկայ փիսոյով ուտէիք. քան թէ ընթերցարանի անունով հաւաքած 600 ֆրանը ումպէտս ծախսէիք, ու 100 ֆրանրէն աւելի ա՛լ ՀԱՍ մը ցոյց տայիք. է՞յ հիմա փիլանֆի լաքէներ, այս ուտե՞լ ուտե՞լ ուտե՞լ ամեն տեղ ուտե՞լ ասոր վերջը ո՞ւր պիտի երթայ, խնդրեմ պատասխան տուէք որ ուրիշ թէֆտէր բանամ.

Անխիղճներ Վարդօին խնդիրը ի՞նչ կապ ունէր այս դաշտային հանդէս կոչածնուդ հետ որ, դուք լաքէներդ միամիտ ժողովրդին մէջ սպրդելով. միշտ վարկաբեկելու կը ջանայիք, անկգայ փիլաֆֆիներ, դուք դեռ չիմացա՞ք թէ՝ Վարդօն Դաշնակցութեան համար մեսիայ մը, փրկիչ մ'է. դեռ չ'զգացի՞ք թէ՝ Վարդօն Դաշնակցութիւնը փրրկելովը ազգը մեծ վտանգէ մը փրկած պիտի ըլլայ, և արդէն այս է բուն պատճառը որ, Վարդօն մինակ չէ, ամեն դիտակից հայ ըլլայ կուսակցական ըլլայ ոչ կուսակցական—իրեն համակրելով ամուր կերպով չրջապատած է. հիմա հասկցա՞ք է՞յ փիլաֆֆիներ.

ՎԱՀԱՊ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թիֆլիզի «Զանգ» թերթը կառավարութեան հրամանով արգիլուած է և խմբագրուհին Օր. Է. Փալանթարեան Թիֆլիզի նահանգապետութեան շրջանէն հեռացուած.

—«Նոր Խօսք» կը գրէ լսում ենք որ մի խումբ տաճկահայեր մտադրութիւն ունին Տիգրան Զ. Էնի խմբագրութեամբ, Թիֆլիզում մի նոր հայերէն օրգան հրատարակել. որը նուիրուած է լինելու զուտ «Տաճկահայ դատին».

—Ամսոյս 17ին Վառնայի քաղաքային վարչութեան անդամներու ընտրութեան հետ կատարուեցան հայ գպրոցներու Հոգաբարձութեան ընտրութիւնը, ընտրուած են «Շարժումի» պատասխանատու պ. պ. Ստեփան Քանարեան, Նախկին պատասխանատու Մուրատ Երանոսեան. Դոկտոր Աւետիսեան, Յ. Հսճոլեան. և Պետրոս Երկանեան.

Կատարեալ յաջողութիւն կը մաղթենք նոր հոգաբարձութեան. կատարելապէս յաջողտնելով ընտրութիւնը և յուսանք որ կարենան գպրոցները կարգին վիճակի մը մէջ դնել.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Եւրոպական լուրջ թերթեր կը հաղորդեն որ Սուլթանի հիւանդութիւնը անբուժելի է. հակառակ պաշտօնական հերքումներու, և վտանգաւոր.

—Սուլթանը բողոքագիր տուած է եւրոպական պետութեանց, յունաց թագաւորին Կրէտէի կառավարիչ որոշելու իրաւունքը տրուած ըլլալուն համար.

—Բ. Դուռը բողոքագիր մը տուած է պետութեանց խնդրելով որ ճնշում բանեցուցի Յունաստանի վրայ յոյն հրոսախմբերու շահատակութեանց առջեւը առնելու համար.

ՌՈՒՍԻԱ

«Մէջ» թերթը կը հաղորդէ որ Սթոլիբին իր սեղանին վրայ գտեր է նամակ մը, հետեւեալ պարունակութեամբ. Մենք 15 հոգի էինք. Օր. Կոնոպլեանիկովան սպանեց Մինը և կախուեցաւ. միւսը սպանեց Կոզլովը. երրորդը ձերբակալուած է ձեր գէմ եղած մահափորձի պատճառով. բայց դեռ 13 հոգի մնացեր ենք.

—Ժէնէրալ Կոզլովի այրին իր ամուսինը սպանողին մահուան վճիռը բեկանել խնդրած է.

—Բեթերհոֆի մէջ նոր խռովարկութիւններ և ձերբակալութիւն տեղի ունեցած է. ձերբակալուած է էին մը. Կըսեն որ ցարի կեանքին դէմ դաւադրութիւն կը պատրաստուէր.

ԳԵՂՈՒՆԻ

Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՍՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒ

Գեղունի իր ծանօթ ծրագրով, իրեն յատուկ գեղարուեստական եւ գրական բովանդակութեամբ հրատարակուած է Կովկասահայ մեծ զանգուածը փութկոտօրէն սփոփեց արկածեալ թրքահայը. հիմա ինքն է լացողը, ինքն է վիրաւորուածը, եւ ինքն է սոսկի եւ կրակի մատնուածը այդ մեր հայութեան ամենէն աղնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐԵԳՈՐԾՈ ԹԻՒՆԸ ձեռնպահ չի մնար եւ Գեղունին որ Կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաժին մուտնի. Ս Ղազար 1000 օրինակ այս նոր Գեղունէն (1906) յղեց Թիֆլիզի Նպաստ Կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին. ընդհանուր հայութեան այն ամէն անհատ ու տարապեալներու գանձանակին մէջ հաւատ լումայ մը 10 ֆր. նետելու կարողութիւնն ունի, ցանկալի է որ դիմէ այդ յանձնաժողովին, ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակուած Գեղունին որուն կատարելութեանը համար թելթին մի եւ նոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք թափած է եւ աւելի եռանդով.

Գեղունի բաժնեգինն է 10 ֆրանկ.

Մեր հասցէն է՝ ԷՄԲՐԻՄԸՐԻ Ա.Ր-ՄԷՆԻԷՆ ՍԹ. ԼԱԶԱՐ ՎԷՆԻՍ (Իթալիա)

ՍՏԱՑՈՂԸ

«ՆՈՈ—ՀԱՆԴԷՍԸ»

Նախաձեռնած ըլլալով Փարիզի Հ. Յ. Դ. Ուսանողական Մարմնի կողմէն, «Նոր—Հանդէսը» պիտի ջանայ ծանօթացնել հայոց մասին օտար լեզուով լոյս տեսած կարեւոր աշխատութիւնները եւ ամփոփ տեղեկութիւններ եւ տեսութիւններ տալ միջազգային հասարակական եւ քաղաքական այժմէութիւններու եւ եւ մասնաւորապէս հայկական հարցի եւ կեանքի իրականութեան մասին:

Խմբագրութեան հասցէ՝
6 Ռիւ Պէրթօլ. 6 Բարիզ
(Ֆրանսա)

«ԱՐՄԻԻ»

Կիսամսեայ
զգայն, Գրական, Քաղաքական
Տարեկան բաժնեգին է մէկ տոլար Ամերիկայի, 6 ֆրանք արտասահմանի համար.

Դիմել հետեւեալ հասցէին՝
Էտիթոր օֆ «Արմիա» Բ. Օ. Պօքս 2191, Պոսթոն Մաս

Печатница на П. Глушковъ С. Вар